Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (__8__ - դասաժամ), դասվարի (10 - դասաժամ), քիմիա (__10__ - դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (ինֆորմատիկա) (__7__ - դասաժամ), կերպարվեստ (__7__ - դասաժամ), երգ (__5__ - դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 3**-ից մինչև **սեպտեմբերի 16**--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 13:00-ին՝ մաթեմատիկա, ԹԳՀԳ (ինֆորմատիկա), երգ, սեպտեմբերի 23-ին, ժամը 13:00-ին՝ քիմիա**, **դասվար, կերպարվեստ** Գյումրու №8 միջնակարգ դպրոցում, հասցե՝ ք. Գյումրի, Լիսինյան 6:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 00-98-60 հեռախոսահամարով: